ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«31» 03 2017թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 31

Ձեռնարկողը՝ *<<ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս>> ՍՊԸ*
Ք. Երևան, Վ. Սարգսյան 26/3

Գործունեությունը՝ *Հին Արտաշատի տարածքում, Խոր Վիրապ վանքի հարևանությամբ դիտահարթակի և այցելուների տեղեկատվական ու սպասարկման կենտրոնի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ*
ՀՀ Արարատի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 3 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 31

«31» 03 2017թ.

«ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս» ՍՊԸ կողմից ներկայացված Հին Արտաշատի տարածքում, Խոր Վիրապի վանքի հարևանությամբ դիտահարթակի և այցելուների տեղեկատվական ու սպասարկման կենտրոնի նախնական գնահատման հայտ

Պատվիրատու՝	«ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս» ՍՊԸ
Նախագծող՝	«2AB Բեդրոսյան Ճարտարապետական արվեստանոց» ՍՊԸ, «ՀՊՈ Զորավիգ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Աշխատանքային նախագիծ, Նախնական գնահատման հայտ;
Տեղադրման վայրը՝	ՀՀ Արարատի մարզ, Լուսառատ համայնք
Գործունեության կատեգորիան	/Գ/ կատեգորիա

Համաձայն ներկայացված նախնական գնահատման հայտի Հին Արտաշատի տարածքում, Խոր Վիրապի վանքի հարևանությամբ նախատեսվում է դիտահարթակի և այցելուների տեղեկատվական ու սպասարկման զբոսաշրջային կենտրոնի կառուցում:

Կենտրոնի տարածքի ընտրությունը որոշվել է ելնելով տարածքի տեղագրական պայմաններից, բնական սահմանազծերից, տեղանքի բնական առանձնահատկությունների հետ հուշարձանի հորինվածքային փոխկապվածության բնույթից: Նպատակ է դրվել պահպանել արժեքավոր բնական լանդշաֆտը, որտեղ շահեկանորեն ընդգծվում են բնության մեջ գտնվող հուշարձանը, ապահովել միջավայրի հետ նոր կառույցի ճարտարապետական միասնությունը, ստեղծել այցելուների և զբոսաշրջիկների համար առողջ, հարմար և գրավիչ միջավայր:

Հիմնական շինությունը տեղադրված է Խոր Վիրապի վանքի հարևանությամբ, ինչը թելադրում է և հնարավորություն է ստեղծում իրականացնել ներդաշնակ և հուշարձանի տարածքից չընկալվող կառույց:

Կենտրոնի սպասարկման համար տարածքում նախատեսվել են ավտոհանգրվան, զուգարաններ, բացօթյա ցուցադրություն, պահակակետ որոնք նույնպես չեն դիտվում հուշարձանի տարածքից:

Հիմնական շինությունը, որը ունի բարդ հատակագծային ուրվագիծ, արևմտյան մասում տեղադրված է հողային աշխատանքների արդյունքում առաջացած աստիճանաձև, համարյա ուղղաձիգ քարափին և կրկնում է լանջի թեքությունը: Կառույցի ներդաշնակությունը ապահովելու համար տանիքում նախատեսվում է իրականացնել համապատասխան հողային շերտ և կանաչապատել, ինչպես նաև ապահովել դրա ոռոգման խնդիրը: Այդ շինությունում նախատեսվում է տեղադրել սրճարան, այցելուների և զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն, այդ թվում Հայաստանի բրոնզեդարյան–երկաթեդարյան հնագիտական առարկաների /բնօրինակների/, թեմատիկ կարճ տեսաֆիմերի ցուցադրություն, առեվտրի կետ և օժանդակ՝ ինժեներական սպասարկման համար սենք:

Տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ՝

- Գործունեության ընդհանուր տարածքը – 5600 մ²
- Կառուցապատման մակերեսը – 1660 մ² ,այդ թվում՝
- Խոր Վիրապ տուրիստական սպասարկման կենտրոն՝ 225 մ²
- Աստիճանավանդակ դեպի վանք՝ 120 մ²
- Ավտոկայանատեղի՝ 1020 մ²
- Ավտոկայանատեղի ավտոբուսների համար՝ 290 մ²

Ջրամատակարարումը իրականացվելու է գոյություն ունեցող ցանցից, ջրահեռացման համար նախատեսվում է անջրթափանց սեպտիկ հոր:

Ջեռուցումը իրականացվելու է էլեկտրոներգիայով:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացած աղբը տեղափոխվելու է մինչև 10 կմ հեռավորության վրա, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սահմանված վայր:

Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում մթնոլորտի վրա ազդեցությունը կապված է հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընացքում առաջացող արտանետումներով: Շինարարական աշխատանքները կրում են ժամանակավոր բնույթ և չունեն զգալի ազդեցություն:

Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցությունների բացառման, նվազեցման նպատակով նախատեսված են մի շարք միջոցառումներ:

Օդային ավազանի վրա ազդեցությունը կապված է հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընթացքում առաջացող արտանետումներով:

Օդային ավազանի աղտոտումը նվազեցնելու նպատակով նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- շինարարական հրապարակները ցանկապատել համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- պարտադիր կարգով շինանյութերը, ավելցուկ գրունտը և շինարարական աղբը տեղափոխել անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով,
- շինհրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել,
- սորուն նյութերը (ավազ, ցեմենտ) պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,

- շինարարական տեխնիկայի տեղաշարժը և աշխատանքը իրականացվելու է միայն գոյություն ունեցող ճանապարհներով, բացառելով կանաչ գոտիների վնասումը, նոր տարածքների խախտումը և աղտոտումը:
- բացառվելու է շինարարական աղբի և հողերի կուտակումները բուսածածկ տարածքներում:
- պարբերաբար իրականացվելու է տեխնիկայի շարժիչների կարգաբերում,
- չոր եղանակների ժամանակ իրականացվելու է խճի, պահեստավորված և տեղափոխվող հողային զանգվածների խոնավացում:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ աշխատանքները իրականացվելու են ջրային ռեսուրսներից բավականին հեռավորության վրա, կարելի է եզրակացնել, որ թե շինարարության, և թե շահագործման ընթացքում որևէ ազդեցություն ջրային ռեսուրսների վրա չի լինի:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվում է շինարարական հարթակների ջրցանի, ինչպես նաև ինժեներատեխնիկական անձնակազմի, բանվորների և վարորդների կոմունալ կենցաղային կարիքների ապահովման համար:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել և իրականացնել կանաչապատման աշխատանքներ:

Եզրահանգում Նախատեսվող գործունեության հիմնական ազդեցությունը պայմանավորված է շինարարության փուլով, ինչը չունի զգալի ազդեցություն և կրում է ժամանակավոր բնույթ: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի վերաբերյալ կազմակերպվել են հասարակական լսումներ, որոնց արդյունքում կազմված արձանագրություններով մասնակիցները և ազդակիր համայնքը նախատեսվող գործունեության իրականացմանը տվել են իրենց հավանությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս>> ՍՊԸ կողմից ներկայացված Հին Արտաշատի տարածքում, Խոր Վիրապի վանքի հարևանությամբ դիտահարթակի և այցելուների տեղեկատվական ու սպասարկման կենտրոնի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Մասնագետ՝ Ա. Մինասյան